Օգոստ. 6-ի նիստում Յ. Քաջազնունին պատասխանեց եղած քննադատություններին: Նա յայտնեց, որ ինքը գիտակցաբար խուսափել է լայն ու անիրագործելի խոստումներից և կառավարական ծրագրի մէջ դրել է միայն օրւայ հրատապ կարևորություն ունեցող հարցեր: Իր քաղաքականության հիմքը կազմելու են քաղաքացիական ազատություններն ու ռամկավար սկզբունքները: Արտաքին քաղաքականության առպարէզում մնալու է Բաթումի դաշնագրի տեսակէտի վրա և դրանից մագաչափ չեղում չի թոյլատրելու: Ապա իբրև եզրափակում, դրեց հաւանության պահանջ:

Այդ պահանջին ընդառաջ գնացին միայն դաշնակցականներն ու մահմեդականները. միւս պատգամաւորները դէմ եղան: Այսպիսով, դեռ գործի չսկսած, ծաղեց կառավարական տագնապ:

Փափուկ դրությունից դուրս գալու համար յայտարարուեց ընդմիջում, որից յետոյ ժողովրդականների մի մասն էլ միացաւ դաշնակցականների բանաձևին, և կառավարությունը ստացաւ վստահության քվէ: Յօգուտ կառավարության քվէարկեցին դաշնակցականները, 4 ժողովրդականներ, մահմեդական և ռուս պատգամաւորները. ձեռնպահ մնացին 5 սոց.-դեմ., 3 սոց.-յեղ., 2 ժողովրդական և 1 անկուսակցական՝ Պ. Զաքարեանը, որը յետագային, համարեա միշտ, ընթացաւ սոց.-դեմոկրատների հետ միասին:

Այսպիսով, իր կեանքի առաջին իսկ օրից, Հայաստանի Խորհուրդը դուրս եկաւ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով և անակնկալներով հարուստ մի մարմին: Նրա այս հիւանդությունը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղաւ բուժել: